պոսի հիւրընկալութեան մասին յիշատակութիւն ունի ՊՁԹ թուին և Ներսէս արեղան (մի տարի յետոյ վարդապետ), Թովմայի վերոյիշեալ աշակերտը, որ իւր ուսուցչի հետ Մեծոփից Մատնավանք էր փախել և այնտեղ վերջացրեց Առաքել Սիւնեցու Սահմանաց Դաւթի մեկնութիւնը. «Սկ՞սլ եղեւ ի վանս Մեծոփայ և աւարտեցաւ ի վանս Մատնավանից, առ ոտս արքեպ՞սի Ստփն՞սի, որ յոյժ սէր և հայրու՞ի եցոյց մեզ»*։ Թովմայի փախուստն այստեղ երեք տարի տևեց**։ Ապա նա անցնում է Տարօնի Առաքելոց վանքը և ականատես լինում Վարդան անունով քահանայի մատնութեամբ Մուշի ամիրայի կատարած յափշտակութիւններին. «զի յայսմ ամի (ՊԾԸ=1439) տիեզերալոյս և քաջ բարեւնապատն Թովմա փախըստական էր եղեալ յազգէն նեստողաց, ի գաւառէն Արճիշոյ և եկեալ հանդիպեցաւ ի սուրբ ուխտն Առաքեալք երկու վարդապետօք և բաղում գրոց աշակերտօք»***։ ՊՁԹ թուականին արդէն Թովման պէտք է իւր վանքում լինէր. որովհետև ՊՂ թուականին նա ստացել էր Յովհաննէս Կոլոտիկ վարդապետից հրաւէր, մասնակցելու Էջմիածնի նորոգութեան ժողովին, իսկ այդ հրաւէրը պատասխան էր իւր մի տարի առաջ Նրան ուղարկած ողջունի նամակին†։ Բացի դորանից վերոյիշեալ Ներսէս արեղան իւր գիրքը գրել է «հրամանաւ և արդեամբ» Թովմայի, Մատնավանքում. իսկ ՊՂ (=1441) թուականին նոյն Ներսէսը Հերապետ կրօնաւորի հետ Թովմային խնդրում է գրել Փաշամայր կնոջ համար մի աւետարան, որ պէտք է ի վայելս իւր ընծայուէր, արդէն Մեծոփայ վանքում†† և ժողովի գնալուց անշուշտ առաջ։ Ուշադրութեան արժանի է, որ այս աւետարանի յիշատակարանը Թովման թուագրում է «ի հայրապետութ՞են ՞ան Գրիգորի ս՞ը Էջմիածնի»։ Գրիգոր Մուսաբէգեանի համար։

Գ.

Թովմայի կեանքի, ինչպէս և ընդհանուր Հայոց համար 1441 թուականը շատ մեծ նշանակութիւն ստացաւ։ Այս թուականի գարնանն էր, որ արևելեան վարդապետները վերջնական համաձայնութեան եկան Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու։ Այս միտքը ե՞րբ է ծագել Հայոց մէջ, իսկապէս որոշ չէ։ Բայց Գրիգոր Տաթևացու փորձերը Աղթամարցիներին հնա-

---

* Նոր Նիւթեր. Ար. 765. (28)։ ** Թովմա Մեծոփ. պատմ. 109.

*** Ալիշան. Հայապատմ. 549.

† Կոստ. Թովմա Մեծոփ. Ցիշատ. 54. 65.

†† Նոր Նիւթեր. Ար. 767. (30)։